http://doi.org/10.53587/25792865-2024.11-105

ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՌԱԳԻՐ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարտիրոսյան Թ.Ա.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հոդվածում վերլուծվել է տարբեր ժամանակահատվածներում կատարված ձեռագրերի և ստորագրությունների անհատականությունը բնութագրող հատկանիշների կայունությունը՝ անդրադառնալով հատկապես դրանց հետազոտության մեթոդաբանական հարցերին: Ներկայացվել է նաև կազմավորված (կայուն ձևավորված) ձեռագրերով կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների, տարեց և ծերունական տարիքում կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների հետ կապված համամեմատական նյութերի նախապատրաստման և հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող որոշ խնդրահարույց հարցեր և դրանց լուծման հետ կապված որոշ առանձնահատկություններ: Նշվում է, որ այն անձիք, ում մասնագիտությունն ու աշխատանքային գործունեությունն ողջ կյանքի ընթացքում ուղղակիորեն կապված է եղել գրագրության հետ, նրանց ձեռագրերը հիմնականում փոփոխության չեն ենթարկվում կամ քիչ են փոփոխվում, այսինքն՝ տվյալ դեպքում գրեթե պահպանվում են ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշները: Միևնույն ժամանակ, այն անձանց ձեռագրերում, ովքեր երկար ժամանակ չեն գրել, ձեռագրի ընդհանուր հատանիշները կարող են փոփոխության ենթարկվել:

Մասնավորապես, հետազոտությամբ հիմնավորվել, որ տարեց կամ ծերունական հասակի անձանց ձեռագրերի հետազոտության համար շատ կևոր է հետազոտելի փաստաթղթի կատարման ժամանակահատվածին մոտ ձեռագրի համամատական նմուշների առկայությունը, քանի որ նույնիսկ 1 կամ 2 տարվա ընթացքում, կապված առողջական խնդիրների հետ, կարող են փոփոխության ենթարկվել ձեռագրի հատկանիշները:

Բանալի բառեր. *ձեռագիր գրառումներ, ստորագրություններ, դատաձեռագրաբանական փորձաքննություն, փորձագիտական հետազոտություն, մեթոդիկայի առանձնահատկություն:*

Յուրաքանչյուր անձի ձեռագիրն ու ստորագրությունը հանդիսանում են որոշակի առումով նրա յուրօրինակությունն ու ինքնատիպությունը բնութագրող ցուցիչներ, որոնք էլ հենց համարվում են ձեռագրաբանական փորձաքննության օբյեկտները:

Թղթակցական հասցեն՝ Մարտիրոսյան Թամար Ալբերտի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ձեռագրաբանական և հեղինակային փորձաքննությունների բաժնի փորձագետ, e-mail:: tamar.martirosyan@mail.ru

Դատաձեռագրաբանական փորձաքննությունը բավականին բարդ մասնագիտական գործընթաց է, իսկ տարբեր ժամանակաշրջանների ձեռագրերի և ստորագրությունների արդյունավետ և ճշգրիտ ուսումնասիրությունն իր հերթին՝ առավել դժվար:

Տարբեր ժամանակահատվածներում կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների փորձաքննության ընթացքում պետք է հաշվի առնել, որ ձեռագրի ձևավորման տարբեր փուլերում հետազոտություն իրականացնելու համար մեթոդական ճիշտ մոտեցումների կիրառումը առավել ճշգրիտ և հուսալի արդյունքներ կարող է ապահովել, և մասնավորապես՝ գործնականում պետք է կիրառել.

- ✓ ձևավորման վաղ փուլում գտնվող անձանց ձեռագրերի հետազոտման մեթոդիկայի առանձնահատկությունները,
- ✓ ձևավորման միջին փուլում՝ միջնակարգ կրթությանը հաջորդող ժամանակահատվածի ձեռագրերի հետազոտման մեթոդիկայի առանձնահատկությունները,
- ✓ կայուն ձևավորված ձեռագրերի հետազոտման մեթոդիկայի առանձնահատկությունները,
- ✓ տարեց կամ ծերունական հասակի անձանց ձեռագրերի հետազոտման մեթոդիկայի առանձնահատկությունները [1, էջեր՝ 103-112]:

Հարկ է նշել նաև, որ յուրաքանչյուր հետազոտության ընթացքում ձեռագրերի և ստորագրությունների հետազոտությունը պետք է իրականացնել՝ հաշվի առնելով հետազոտելի փաստաթղթերում կատարված գրառումների ժամանակահատվածների տարբերությունները:

Ժամանակի ընթացքում ձեռագրի հատկանիշների կայունության հետազոտությունը դատաձեռագրաբանական փորձաքննության հիմնականխնդիրն է, որը կարևոր է տարբեր ժամանակաշրջաններում կատարված ձեռագրերի և ստորագրությունների հետազոտության մեթոդաբանության մշակման համար: Հետազոտությամբ պարզումը, թե ձեռագրի որ հատկանիշներն են մնում կայուն և թե որոնք են ենթարկվում փոփոխության, ուղղակիորեն ազդում է դատաձեռագրաբանական փորձաքննության արդյունքների ճշգրտության ևհավաստիության վրա:

Հարկ է նշել, որ ձեռագրի ոչ բոլոր հատկանիշներն են ժամանակի ընթացքում մնում կայուն: Որոշ հատկանիշներ, ինչպիսիք են գրելու տեմպը, տառերի թեքությունը, սեղմման աստիճանը և տառերի չափը կարող են համեմատաբար կայուն մնալ տվյալ անձի ձեռագրում երկար ժամանակ: Այնուամենայնիվ, այլ հատկանիշների վրա, ներառյալ՝ գրելու ձևը, տառերի ձևը և ձեռագրի ընդհանուր տեսքը, կարող են ազդել տարբեր գործոններ, ինչպիսիք են հուզական վիճակը, առողջական վիճակը և այլն:

Այս հանգամանքն ընդգծում է ձեռագրի վերլուծության համակարգված մոտեցման կարևորությունը՝ հաշվի առնելով ոչ միայն անհատական առանձնահատկությունները, այլև դրանց փոփոխությունները ժամանակի ընթացքում: Համեմատական վերլուծության մեթոդի կիրառումը թույլ է տալիս ավելի ճշգրիտ որոշել, թե ձեռագրի որ հատկանիշներն են իսկապես կայուն և որոնք կարող են փոփոխության ենթարկվել:

Կարևոր է նաև նշել, որ ձեռագրի հատկանիշների կայունությունը կարող է տարբեր լինել՝ կախված յուրաքանչյուր մարդու անհատական առանձնահատկություններից: Որոշ մարդկանց մոտ ձեռագիրը կարող է մնալ կայուն կամ գրեթե անփոփոխ ողջ կյանքի ընթացքում, մինչդեռ մյուսների մոտ՝ հնարավոր է դրանք հաճախ փոփոխությունների ենթարկվեն:

Ընդհանուր առմամբ, ժամանակի ընթացքում ձեռագրի կայուն հատկանիշների հետազոտությունն ու դրանց վերհանումը պահանջում է համակարգված մոտեցում, որը հաշվի է առնում ինչպես ընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ յուրաքանչյուր անձի ձեռագրի անհատական առանձնահատկությունները: Վերջինս հնարավորություն է տալիս ձեռագրերի և ստորագրությունների հետազոտման համար մշակել և կիրառել ավելի ճշգրիտ մեթոդներ:

Ինչպես վերը նշվեց, տարբեր ժամանակահատվածներում կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների հետազոտությունը բարդ գործընթաց է, որը պահանջում է մասնագիտական մոտեցումներ և մեթոդներ: Նման դեպքերում այդ հետազոտությունները պետք է իրականացնել՝ հաշվի առնելով ժամանակահատվածների տարբերությունները, որոնք առկա են հետազոտելի փաստաթղթերում: Այս դեպքում անհրաժեշտ է բացահայտել և վերհանել ձեռագրի այն կայուն հատկանիշները, որոնք կարող են հիմք հանդիսանալ համեմատական հետազոտության համար: Սա նշանակում է՝ բացահայտել ձեռագրի այն հատկանիշները, որոնք, չնայած ժամանակահատվածների փոփոխություններին, տվյալ անձի մոտ մնում են համեմատաբար կայուն: Այս պարագայում անհրաժեշտ է համեմատական հետազոտություն իրականացնել տվյալ անձի կողմից կատարված ձեռագրի և ստորագրության այն նմուշների միջև, որոնք համապատասխանում են կամ կատարման ժամանակահատվածներով գրեթե մոտ են հետազոտելի փաստաթղթերի կատարման ժամանակահատվածներին [2, էջեր՝ 204-207]:

Տարբեր ժամանակահատվածներում կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների հետազոտման ժամանակ կարող է լինել նաև մեկ այլ խնդիր՝ կյանքի իրավիճակի փոփոխություն, առողջական վիճակի վատացում, հուզական վիճակ, որոնք ևս կարող են անձի ձեռագրի փոփոխության պատճառ հանդիսանալ: Հարկ է նշել նաև, որ դատաձեռագրաբանական փորձաքննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե անձը ֆիզիկական ինչ վիճակում է կատարել հետազոտելի տվյալ ձեռագիր գրառումները: Արդյոք ֆիզիկական հոգնածություն ունեցել է, թե՝ ոչ [3] : Առաջին հայացքից միգուցե այս հանգամանքը հաշվի առնելը կարող է ոչ այնքան կարևոր թվալ, սակայն իրականում մարդու ֆիզիկական հոգնածությունն իր էական ազդեցությունն է թողնում, ինչպես և համարվում է անձի ձեռագրի վրա ոչ պակաս էական ազդեցություն ունեցող գործոններից մեկը:

Բացի այդ, կարևոր է հաշվի առնել հնարավոր տեխնիկական և տեխնոլոգիական գործոնները, որոնք կարող են ազդել ձեռագրի արտաքին տեսքի և հատկանիշների վրա, օրինակ՝ տարբեր գրելագործիքների օգտագործումը, արտաքին լուսավորությունը, թղթի որակի փոփոխությունները և գրելու նոր տեխնոլոգիաների զարգացումը, ինչպիսիք են

էլեկտրոնային սարքերը, որոնք և ժամանակի ընթացքում կարող են հանգեցնել ձեռագրի փոփոխությունների: Ժամանակի ընդհատումներով կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների ուսումնասիրությունը պահանջում է համակարգված մոտեցում, ինչը թույլ կտա արդյունավետ վերլուծել և բացահայտել ձեռագրի հատկանիշների փոփոխությունները՝ հաշվի առնելով դրա վրա ազդող բոլոր հնարավոր գործոնները:

Կայուն ձևավորված ձեռագրի և ստորագրության, ինչպես նաև տարեցների ձեռագրի և ստորագրության հետազոտությունը ձեռագրաբանական փորձաքննության կարևորագույն խնդիրներից է, որը պահանջում է հատուկ մեթոդաբանական մոտեցում: Այս համատեքստում հատկապես կարևոր է հաշվի առնել ձեռագրում կատարվող բնական փոփոխությունները, որոնք կապվում են մարդու կյանքում տեղի են ունեցող փոփոխությունների հետ, ինչպես նաև տարեցների հոգեֆիզիոլոգիական վիճակի առանձնահատկությունները:

Արդեն մշակված, ձևավորված ձեռագիրն ու ստորագրությունը հետազոտելիս հիմնական խնդիրներից մեկը անձի ձեռագրի անհատականությունը բնութագրող կայուն հատկանիշների վերհանումն է: Բացի այդ, կայուն ձևավորված ձեռագրերի ու ստորագրությունների, ինչպես նաև տարեցների ձեռագրերի ու ստորագրությունների հետազոտման ընթացքում կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր անձի անհատական առանձնահատկությունները, որոնք կարող են կապված լինել անձի մասնագիտական գործունեության, կրթական մակարդակի և այլ գործոնների հետ: Այս հատկանիշները հաշվի առնելն օգնում է ավելի ճշգրիտ եզրակացություններ անել հետազոտելի փաստաթղթի ենթադրյալ կատարողի վերաբերյալ [4, էջեր՝ 44-45]:

Այսպիսով, կայուն ձևավորված ձեռագրերով կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների, տարեց և ծերունական տարիքում կատարված ձեռագիր գրառումների և ստորագրությունների հետազոտությունը պահանջում է համակարգված մոտեցում, որը հաշվի է առնում ինչպես ընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ յուրաքանչյուր մարդու անհատական առանձնահատկությունները:

Շատ հաճախ հանդիպող խնդիրներից է վիճելի փաստաթղթերում ինչպես օրինակ՝ կտակներում, նվիրատվության պայմանագրերում և այլն, առկա ստորագրությունների և ձեռագիր գրառումների տվյալ անձի կողմից կատարված լինելու հանգամանքի պարզումը: Երբեմն այդ ձեռագիր գրառումները կատարված են լինում նաև ծերունական կամ տարեց հասակում, կամ առողջական լուրջ խնդիրների առկայության պարագայում: Վերջինիս պարագայում էլ ավելի է դժվարանում տվյալ անձի կողմից վիճելի փաստաթղթում առկա ստորագրությունների և ձեռագիր գրառումների կատարված լինելու հանգամանքը հաստատելու կամ ժխտելու գործընթացը, քանի որ շատ հաճախ տվյալ պայմաններում կատարված ձեռագրի ազատ նմուշներ առկա չեն լինում:

Տարեցների ձեռագրերն ու ստորագրությունները հետազոտելիս անհրաժեշտ է հաշվի առնել ծերացման գործընթացի հետ կապված կոնկրետ փոփոխությունները: Դրանք կարող են ներառել ֆիզիկական փոփոխություններ, ինչպիսիք են մկանային համակարգի խնդիրները և տեսողության վատթարացումը, որոնք կարող են ազդել

ձեռագրի որակի վրա, կամ՝ կենտրոնական նյարդային համակարգի հետ կապված խնդիրները, հիշողության կորուստը, որոնք կարող են ազդել ինչպես բանավոր խոսքի, այնպես էլ ձեռագրի վրա [2, էջեր՝ 147-150]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ գրելու գործընթացի վրա ազդող լուրջ առողջական խնդիրներ չունեցող այն տարեց անձանց ձեռագրերը, որոնք ունեն բարձր մշակվածություն, և երբ ողջ կյանքի ընթացքում նրանց մասնագիտությունն ու աշխատանքային գործունեությունն ուղղակիորեն կապված է եղել գրագրության հետ, ապա այդ անձանց ձեռագրերը հիմնականում փոփոխության չեն ենթարկվում կամ քիչ են փոփոխվում, այսինքն՝ տվյալ դեպքում գրեթե պահպանվում են ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշները: Այս պարագայում տվյալ անձի կողմից տարբեր ժամանակահատվածներում կատարված ձեռագրերի նմուշների և հետազոտելի փաստաթղթի հետ համեմատական հետազոտության արդյունքում դուրս բերված մասնավոր հատկանիշների գնահատման և կատեգորիկ հետևության հանգելու հավանականությունն անհամեմատ ավելի մեծ է լինում [4, էջ՝ 48]:

Տարեց կամ ծերունական հասակի այն անձանց ձեռագրերում, ովքեր երկար ժամանակ չեն գրել, ձեռագրի ընդհանուր հատանիշները կարող են փոփոխության ենթարկվել՝ դանդաղել ձեռագրի տեմպը, փոքրանալ կապակցվածությունը, շարժումների պարզեցման հետևանքով փոփոխվել ձեռագրի կառուցվածքը, ինչի արդյունքում կարող են փոփոխության ենթարկվել նաև ձեռագրի մասնավոր շատ հատկանիշներ:

Այս խմբի ձեռագրերի հետազոտության համար շատ կարևոր է հետազոտելի փաստաթղթի կատարման ժամանակահատվածին մոտ ձեռագրի համամատական նմուշների առկայությունը, քանի որ նույնիսկ 1 կամ 2 տարվա ընթացքում, կապված առողջական խնդիրների հետ, կարող են փոփոխության ենթարկվել ձեռագրի հատկանիշները: Այս պարագայում միայն հետազոտելի փաստաթղթի կատարման ժամանակահատվածին մոտ ձեռագրի նմուշների առկայության դեպքում փորձագետը հնարավորություն կունենա ճիշտ գնահատել համեմատական հետազոտության ընթացքում դուրս բերված տարբերվող և համընկնող հատկանիշները [4, էջ՝ 48]: Հարկ է նշել, որ տարբերվող հատկանիշների գնահատման համար կարևոր է հաշվի առնել այն գործոնները, որոնք ազդում են վերոնշյալ խմբի ձեռագրի հատկանիշների կայունություն վրա:

Կարևորելով վերը նշվածը՝ հարկ է հավելել նաև, որ հետազոտելի փաստաթղթի կատարման ժամանակահատվածին մոտ ձեռագրի նմուշների բացակայության կամ դրանց խիստ սակավության դեպքում, երբեմն նույնիսկ հնարավոր չի լինում հետազոտության արդյունքում որևէ հետևության հանգել:

Դատաձեռագրաբանական փորձաքննության իրականացման գործընթացում կարևոր է նաև տարբեր ժամանակահատվածներում կատարված ձեռագրերի և ստորագրությունների ուսումնասիրության համեմատական նյութերի նախապատրաստումը [2, էջեր՝ 38-52]: Այն բարդ գործընթաց է, որը համեմատական նմուշների ընտրության և մշակման, ինչպես նաև կոնկրետ հետազոտելի փաստաթղթի

կատարման ժամանակահատվածին մոտ նմուշների առկայության հարցում պահանջում է մանրակրկիտ ուշադրություն:

Համեմատական նյութերի նախապատրաստման հիմնական խնդիրներից մեկը դրանց իսկության և կոնկրետ ենթադրյալ կատարողի կողմից կատարված լինելու հանգամանքն է: Սա նշանակում է, որ համեմատական վերլուծության համար հավաքված ձեռագրի և ստորագրության նմուշները պետք է լինեն հենց տվյալ անձի կողմից կատարված նմուշներ: Այդ նպատակով կարող են օգտագործվել բնօրինակ փաստաթղթեր, ինչպես նաև նոտարական վավերացմամբ փաստաթղթերի պատճեններ և այլ նյութեր: Նշվածին պետք է հավելել, որ կարևոր է նաև ուշադրության դարձնել այն հանգամանքին, թե ինչ պայմաններում են կատարվել հետազոտելի ձեռագիր գրառումներն ու ստորագրությունները:

Ձեռագրաբանական փորձաքննության օբյեկտիվությունն ու արժանահավատությունն ապահովելու համար համեմատական նյութերի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտ է նաև ցուցաբերել ճիշտ մասնագիտական մոտեցում. հաշվի առնել, թե կոնկրետ տվյալ հետազոտության համար համեմատական ինչ նմուշներ են անհրաժեշտ, քանզի նյութերի նախապատրաստումը նույնպես բավականին բարդ և կարևոր գործընթաց է, և հետագա հետազոտության արդյունավետությունը կախված է նաև համեմատական նյութերի ճիշտ ընտրությունից [1, էջեր՝ 112-114]:

Այսպիսով, տարբեր ժամանակահատվածներում կատարված ձեռագրերի և ստորագրությունների հետազոտության համար համեմատական նյութերի նախապատրաստումը պահանջում է ճիշտ մոտեցում, մասնագիտական հմտություններ, որի արդյունքում հնարավոր է հասնել ճշգրիտ և հուսալի արդյունքների:

Գրականության ցանկ

1. Манцветова А.И., Орлова В.Ф., Доброславская Е.Е., Судебно-почерковедческая экспертиза / М.: Юридическая литература, 1971. часть 2.
2. Добровольская Е.Д., Манцветова А.И., Орлова В.Ф., Судебно-почерковедческая экспертиза/ М.: Юридическая литература, 1971. -304 с.
3. Черепенько Г. В. Диагностическое исследование почерка лиц в необычном психофизиологическом состоянии–физической усталости // Вестник Московского государственного областного университета. Серия: Юриспруденция. 2023. № 1. С. 125–131.
4. Судебно-почерковедческая экспертиза: особенная часть: исследование рукописних текстов: изд. 2-е, перераб. и доп. /Гос.учереждение Рос. Федер.центр судебной экспертизы при Минюсте России. М.: Наука, 2007. -341 с.

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ МЕТОДОЛОГИИ ИССЛЕДОВАНИЯ РУКОПИСЕЙ И ПОДПИСЕЙ, ВЫПОЛЕНЕННЫХ В РАЗНЫЕ ПЕРИОДЫ

Мартиросян Т.А.

В статье анализируется устойчивость признаков, характеризующих особенности рукописей и подписей, выполненных в разные периоды. Особое внимание уделено методическим вопросам их исследования. В работе представлены некоторые вопросы, связанные с методологией исследования и подготовкой сравнительных материалов, по выполнению рукописей и подписей устойчивым (сформированным) почерком в пожилом возрасте, которые продолжают оставаться дискуссионными. Автором излагается обобщенная характеристика особенностей решения задач по рассматриваемой в статье тематике. В частности, в статье с учетом накопленного и обобщенного практического опыта отмечается, что при исследовании почерка и подписей пожилых людей необходимо учитывать особенности изменения, связанные с процессом старения. Отмечается, что когда профессия и трудовая деятельность на протяжении всей жизни были непосредственно связаны с письмом, то почерк этих людей в основном неизменен или подвергается незначительным изменениям. В то же время, подчеркивается, что в почерке людей, длительное время не выполняющих письменные работы, общие характеристики почерка могут подвергаться изменению.

В результате проведенных исследований автор приходит к выводу, что для исследования почерка лиц пожилого возраста очень важно иметь сравнительные образцы почерка, близкие по времени оформления исследуемого документа, поскольку даже в течение 1-2 лет из-за проблем, связанных со здоровьем могут изменяться характерные особенности почерка.

Ключевые слова: *рукописные записи, подписи, судебно-почерковедческая экспертиза, экспертное исследование, особенности методики.*

THE PECULIARITIES OF THE METHODOLOGY FOR EXAMINING MANUSCRIPTS AND SIGNATURES COMPLETED IN DIFFERENT PERIODS OF TIME

Martirosyan T.A.

The article analyzes the stability of features characterizing the peculiarities of manuscripts and signatures completed in different periods of time. Particular attention is paid to methodological issues of their examination. The article presents some issues related to research methodology and the preparation of comparative materials on the manuscripts and

signatures completed in stable (formed) handwriting in elderly age. The author presents a generalized description of the features to solve the issues on the topic discussed in the article. Taking into account the accumulated and generalized practical experience, the article notes that when studying the handwriting and signatures of elderly people, it is necessary to take into account the features of changes connected with the aging process. It is noted that handwriting of people whose profession and work activity had been related to writing throughout their life, then, in fact, their handwriting had always remained unchanged or had undergone minor changes. At the same time, it is emphasized that in the handwriting of people who have not performed written work for a long time, the general characteristics of handwriting may change.

As a result of the conducted research, the author comes to the conclusion that for studying the handwriting of elderly people, it is very important to have comparative handwriting samples close to the time of formation of the document, since even within 1-2 years handwriting features may change because of health problems.

Keywords: *handwritten notes, signatures, forensic handwriting expertise, expert research, features of the methodology.*

Ներկայացվել է խմբագրության 13.05.2024
Ընդունվել է տպագրութան 28.06.2024